



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

12 օգոստոսի 2014թ.

Նայասարանի Նահանապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ն. Նազարյանի

Անդամակցությամբ՝ Վ. Նովհաննիսյանի

Ա. Թունյանի

Ուսումնասիրելով «Մուսալեռ» Տպագրատուն» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
«Մուսալեռ» Տպագրատուն» ՍՊԸ-ն դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՆՏ
Սահմանադրության 8-րդ, 18-րդ և 31-րդ հոդվածներին հակասող ճանաչել «Մնանկության
մասին» ՆՏ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը:

1. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը հնարավորություն է ընձեռում սնանկությա
յան գործ քննող դատարանին կայացնել որոշում, որով սնանկացած և առողջացած (իրավա
բանորեն) անձին ազատում է նախկին պարտավորությունների հանդեպ պարասխանավորու
թյունից, ինչն, ըստ էության, գրկում է գործով մասնակից չհարձած (իրագեկված չլինելու պար
ճառով) պարտաբիրոջը (ֆիզիկական կամ իրավաբանական անձին) սեփականությունը վերա
կանգնելու իրավունքից:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գտնում է, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հիշյալ հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն այդ հարցով իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ ՆՏ սահմանադրական դատարանի որոշում, ինչպես նաև այլ դիմումի հիման վրա նույնաբովանդակ հարցով սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները,
- առկա է պետական փուրքի վճարման հանձնարարական:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց Ց .

1. «Մուսալեռ» Տպագրատուն» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործը՝ «Մնանկության մասին» ՆՏ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության սահմանադրականության վերաբերյալ, ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պապասխանող կողմ ներգրավել ՆՏ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝